

Դեյուա՞ր

محله جمعية القاهرة الخيرية الأرمنية العاًمة

ՏԵՂԱԿԱՆՈՒ

ՀՐԱՏԵՐՎԱԳՈԽԹԻՒՆ ԳԱՅԻՐԵՒ Հ.ԲԸՄԻՌՈԽԵՄԱՆ

المدير المسؤول : أ. صاروخان - ١٥ شارع عماد الدين بالقاهرة - تليفون ٩١٩٦٣٦ - ص. ب. ٧١٧

Ժ. ՏԱՐԻ ԹԻՒ 4 - 6

ԱՊՐԻԼ - ՅՈՒՆԻՍ 1973

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

Երկա՞ր տարիներ, ո՞ւր որ ալ ըլլամ այս աշխարհին մէջ
ու երէ մոռնամ ե՞ւ մայր եւ եղբայր, մինչեւ զերեզման
էութեանս մէջ պիտի մնայ վառ, հուրբու ու անչ'չ,
բառ մը սրբած, իտեալ մ'աննման՝ բարեգործական:

Դուն նման ես նիւդ արեւի ըողին, վառ ու անվախնան
Շողերդ սփոռուած ծագերն աշխարհի, բարիք կը տեղան,
Հայու որդինե՞ր, սա խօսին արփաւէս, երգեցէք այսօր,
«Բարձր պիտ' պահենիք, ջանդ աննման Միութիւն հզօր»:

Հայ ժողովուրդն ալ քեզ տեսչայ ընդմիւս, խենքի մը նման,
Այժմ ահա ունիս ըուրջդ հաւաքուած զաւակնե՞ր անթիւ,
Որննցմէ մէկն եմ ես, մայր իմ անգին, ով մայր սրբազն.
Քեզ պիտի երգեմ ու պիտ' երգեն ենդ դարե՞ր անհաչի:

Հայ ժողովուրդին հոգիներուն մէջ, նրա՞գ լուսաւող
Մութը փարատող, մաքն' որ ըողերով ու մըսապայծան,
Պիտ' փայլի՞ս յաւէս, հայոց երկնին վրայ խոկացող,
Կանքեղին նման, մեծ կուսաւորչին, յաւիտեան անմար...:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

Ա. Զ. Դ

- Տեղեկատուն առ այժմ կը հրատարակուի պարբերաբար:
- Թղթակցութեանց, դրամական նուերներուն, գիրքերուն, թերթերուն եւ հանդէսներուն առարումները կատարել խմբագրութեանս հասցեին.

Խմբագրութիւն «ՏԵՂԵԿԱՑՈՒ»ի

15, Էմաս էլ Տին փողոց — Գանիքէ
Հեռախոս 919636 — Նամակատուփ 717

—————

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1— Հ. Բ. Ը. Մ.ի Վարչունեօրերորդ Տարեդարձը (Հիմնական Ծանօթութիւններ)
- 2— Գեղօնի ի պատին Հայ ժողովուրդի ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎՐԴ. ԱՀՄԱՐԱՆԵԱՆ
- 3— Գեղեցիկն ու Բարին ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՆԱՐՈՅԵԱՆ
- 4— Գանիքէի Հ. Բ. Ը. Մ.ի Տարեկան Անդամական Ընդհանուր Ժողովը
- 5— Հ. Մ. Ը. Մ.-Նուպարի Մեծ Քերմէս-Պազարը
- 6— Հ. Մ. Ը. Մ.-Նուպարի Նորընիք Վարչական Կազմը
- 7— Ժիրայր Փափազեանի Ասմունիքի Ելոյթները
- 8— Ալեք Մանուկեան Գրական Մրցանակին վերջնական արդիւնքները
- 9— Հ. Բ. Ը. Միութեան Հիմնադիրներու օրը Տիբրոյի մէջ
- 10— Հայկական Մանրանկարներու հաւաքածոնի
- 11— Ի՞նչ է Արոմը
- 12— Տիրունի

ՀԱՅՈՒԹ

محلية جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة

ՏԵՇԿԱՏՈՒ

ՀՐԱՄԱՎՐԱԿԻՆԹԻՒ ԳԱՅԻՐԵՒ Հ.ԲԸՄԻՐՈՒԹԵԱԾ

المدير المسؤول : أ. صاروخان - ١٥ شارع عماد الدين بالقاهرة - تليفون ٩١٩٦٣٦ - ص.ب. ٧١٧

Ճ. ՏԱՐԻ ԹԻՒ 4 - 6

ԱՊՐԻԼ - ՅՈՒՆԻՍ 1973

ՎԱՐՍՈՒԵՍԹԵՐՈՐԴ ՏՈՐԵԴԱՐՁԻՆ ԱՄԹԻԻ Հ. Բ. Բ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1.— Հ. Բ. Բ. Միութիւնը հիմնուած է
15 Ապրիլ 1906-ին, Գահիրէի մէջ, Պօղոս
Նուպար փաշայի կողմէ:

2.— Հիմնադրութեան ժամանակ, Պօ-
ղոս Նուպար փաշա իբր զործակից ունե-
ցած է հետեւեալ անձնաւորութիւնները. —
եագուած Արթին փաշա, Տոքթ. Նազարէթ
Տաղաւարեան, Երուանդ Պէյ Աղաթօն, Մը-
կըրտիչ Անդրանիկեան, Գրիգոր Եղիայեան,
Առաքէլ Պէյ Նուպար, Մկրտիչ Պէյ Մար-
կոսով, Կարապետ Պէյ Շերիտճեան և Յով-
հաննէս Յակոբեան:

3.— Զարդ, Միութիւնը ունեցած է
վեց նախագահներ.

- ա) Պօղոս Նուպար Փաշա (1906-1930)
- բ) Գալուստ Կիւլպենկեան (1930-1932)
- գ) Զարեհ Պէյ Նուպար (1932-1940)
- դ) Տոքթ. Պօղոս Քոլուեան (1940-1942)
- ե) Արշակ Գարակէօղեան (1942-1953)
- զ) Ալեք Մանուկեան (1953-էնի վեր)

4.— Կարեւոր թուականներ Հ. Բ. Բ.
Միութեան կեանքին մէջ.-

1906՝ հիմնադրութիւն:

1915-24՝ որբահաւաք և հիմնում՝ որ-
բանոցներու, այրիանոցներու, պատսպա-
րաններու և գարմանատուններու:

1924՝ վերակազմութիւն և կեդրոնի
փոխադրում Փարիզ:

1931՝ տօնակատարութիւններ՝ միու-
թեան արծաթեայ յորելեանի և նուպարա-
շէնի ձեռնարկ՝ Հայաստանի մէջ:

1940՝ միութեան կեդրոնի փոխադ-
րութիւն՝ նիւ եռք:

1942-48՝ զանազան հանգանակութիւն-
ներ՝ օգնելու համար հայրենական մեծ
պատերազմին և ներգաղթին:

1952-էն սկսեալ՝ դպրոցաշինութեան
ձեռնարկներ և երիտասարդական կեդրոն-
ներու հաստատում և զարգացում, ինչպէս
նաև հայ մշակոյթը տարածելու ձեռնարկ-
ներ Հիւսիսային և Հարաւային Ամերիկա-
ներու մէջ: Քաջալերանք՝ հայ հրատարա-
կութեանց և գեղարուեստի արտայայտու-
թիւններու:

1956՝ Միութեան ոսկեայ յորելեանի
տօնակատարութիւններ:

1966՝ վաթսունամեակի տօնակատա-
րութիւններ:

5.— Միութեան մեծագոյն բարերար-ները

ա) Պօղոս Նուպար փաշտ,

բ) Կարապետ և Գրիգոր Մելքոնեան եղբայրներ,

ց) Թագւոր փաշտ, Լեւոն պէջ, և Տիկ. Երանուհի Յակոբեան,

դ) Տէր և Տիկ. Սիմոն և Երանուհի Գայսերլեան,

ե) Տիգրան Խան Քելեկեան,

զ) Տոքթ. Վարդգէս Մկրտչեան,

է) Տիար Ամրգիս Յովակիմեան և Տիկ. Մէօհրիւպէ Մանուկեան,

ը) Տիար Ալեք Մանուկեան,

թ) Տիար Երուանդ Հիւսիսեան,

ժ) Տիար Արշակ Գարակէօգեան:

6.— Հ.Բ.Բ. Միութեան գործունէութեան գաշտը բաժնուած է երեք չրջանակերու:

ա) Ամերիկա՝ բ) Եւրոպա գ) Միջին Երեւելք

7.— Ներկայիս Հ.Բ.Բ. Մի կեդրոնն է Նիւ Եսորք: Միջին Արեւելքի չրջանի կեդրոնն է Գաճիրէ, բայց գործնականապէս Պէյրութին է որ ստանձնած է այդ գերը:

8.— 1972-ին, սփիւռքի մէջ Միութեան մասնաճիւղերուն և անդամներուն թիւն էր:

Առանց նկատի տանելու Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան անդամները:

9.— Հ.Բ.Բ. Միութեան այժմու ընդհանուր գրամագլուխն է չուրջ 60 միլիոն լիր. սոկի:

10.— Միութեան տարեկան ընդհանուր յատկացումն է չուրջ 4,5 միլիոն լիր. սոկի:

11.— Հ.Բ.Բ. Միութիւնը, իր հիմնադրութենէն մինչեւ 1972-ի վերջը, զանազան նպատակներու համար ծախսած է չուրջ 60 լիր. սոկի:

12.— Արտասահմանի մէջ, Հ.Բ.Բ. Միութիւնը ունի 17 սեփական վարժարաններ.

Լիբանան՝ 6՝ ա) Յովակիմեան — Մանուկեան Մանչերու Երկրու վրժ., բ) Դարուհի Յակոբեան Աղջկանց Երկրու վրժ.,

գ) Եր. Տեմիրճեան վրժ., դ) Լեւոն Կ. Եաւզարեան վրժ., ե) Երուանդ Հիւսիսեան Հայագիտական Ուսմանց Հիմնարկ, զ) Անթիլիասի վրժ.:

Առւրիա՝ 4՝ (Լազար Նաճարեան — Գ. Կիւլպէնկեան Կեդրոնական վրժ., Հալէպ, Սեգրակ Մեսրոպեան վարժարան, Հալէպ, Կիւլպէնկեան վարժարան Դամասկոս, Աւետիս Սարաֆեան վարժարան՝ Այն Ել Արապ):

Իրան՝ 2 (Նուպար Տզայոց և Աղջկանց վրժ., Թէհրան: Նուարդ Կիւլպէնկեան վարժարան՝ Թէհրան):

Յունաստան՝ 1 (Արթաքի Գալֆաքեան Նախակըթարան՝ Աթէնք):

Կիւլպոս՝ 1 (Մէլքոնեան Կրթական Հաստատութիւն՝ Նիկոսիա):

Ամերիկա՝ 2 (Ալեք Մանուկեան վարժարան, Տիթրոյթ, Ամենօրեայ վարժարան՝ Աւոթթութուան):

Գանատա՝ 1 (Ամենօրեայ վարժարան, Մանթթէալ):

Ասոնցմէ զատ Աւստրալիոյ Սիտնի քաղաքին մէջ սկսած է գործու Շաբաթօրեայ Մանուկեան վարժարանը:

13.— Հ.Բ.Բ. Միութիւնը սփիւռքի մէջ կը պահէ 221 համալսարանական և 43 արհեստագիտական ճիւղերու հետեւող թոշակաւոր սաներ, որոնց համար կը յատկացնէ տար/կան չուրջ 500 հազար լիր. սոկի:

14.— Հ.Բ.Բ. Միութիւնը, 1931-ին, Պէյրութի մէջ հիմնած է Հայ Երիտասարդաց լ'նկերակցութիւնը, որ ներկայիս կը հաշուէ չուրջ 3000 երկսեռ անդամներ, և ակումբներ ունի Պէյրութի, Զահլէի, Թրիփուլի, Ալէյի, Լաթաքիոյ, Դամասկոսի, Հալէպի, Քամիչլիի, Պաղտականի, Ամմանի Աթէնքի մէջ և այլուր:

Ծնորհիւ Միութեան նախագահ Տիար Ալեք Մանուկեանի իշխանավայել նուիրատը ութիւններուն, Պէյրութի մէջ կառուցւեցաւ Հ.Բ.Բ.ի չքեղ «Ալեք Մանուկեան Կեդրունը», որ սահմանուած է ըլլալու նաև Բարեգործականի մայր տունը Լիբանանի մէջ, ինչպէս նաև Զահլէի գաղութը ունեցաւ «Ալեք Մանուկեան մարզարան. հաւաքաղայրը»:

ԳԵՂԵԾ

Ի ՊԱՏԻՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՐԴԻ

Մենք պատմութեան մէջ մեծ ազգ եղած ենք,
Փողովուրդներու, ազգերու օրրան:
Հրեան, Ասորին, Պարսիկն ու Հելլենն
Անոր փառքին վլրկան ըլլան:

Մեր ազգն եղած է ազգ մը փառաւոր.
Հարցուցէր Անիի պարհուացներուն:
Սերունդներ, ինչպէս Աղուանը հրզօր
Մեզի կ'պարտին գիրն ու լեզուն:

Նիւր է պարծանքի, ունեւ ազգին,
Քիչ մը ձեռագիր. բար ու յուշարձան:
Պարծելու համար, ցեղերու շարքին,
Մենք ալ ունինք անցեալ մ'աննման:

Ինչո՞վ պարծենալ: Գրջով ուկեխոս...
Տեսէր, այսօրուան ազգերը նարտար,
Անձանօր եին եւ դեռ բարբարոս,
Երբ ունեցանք լոյս Ռոկեդար:

Ազգեր կը պարծին իրենց հաւատրով...
Մեր արքան եղաւ արքան Առաջին,
Որ, երբ դեռ խաւար կար ազգերուն բով,
Խաչն առաւ մականի կողքին:

Սուրո՞վ պարծենալ...: Տիսբոնն ու Պոլիս
Թող ըսեն ի՞նչ չըրինք իրենց համար:
Անոնցմէ մեկուն, հայն երբ ըլլար կից,
Միւսն ապահով տեղի կու տար:

Մեր քաջութեան վրայ մատեաններ, գիրքեր
Գրուեցան: Մինչ շատ ազգեր, այժմ փայլուն,
Քաջութեան մասին, կը զտնուին դեռ
Իրենց առաջին տողերուն:

Ցեղերն հայ ազգին շատ բան կը պարտին.
Ան պարծանք կ'մնայ պատմութեան համար:
Ես անոր ներկան, մարդկութեան շենքին,
Միւն մ'ե հզօր ես բարձր կամար:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎՐԴԻ ԱՀՄԱՐԱՆԵԱՆ

ԶԺՄԱՆՈՒ ՄԻԱՐԱՆ

Դպուի յաղթանմոի պահպանելու

իշտգեկիոց մեմսղ ՚մե
մրտգեկամենանցպատ զգ վիտգեկոնդզ մսկոց
՚մե մրտգեկատգենանցպատ ՚միսնաք մասցոց
-եցյ յոհկորբանցյ ցոհկմուտ վիսնաբոցուցյ
յոդգեավ.Ռ.Ռ.Շ. վկմկցով ՚նկր յվմտի
-տժուոց ոյտգեկավ.Ռ Կտեզցոս վելու յվե
մրտք ՚մ.կ. ՇՀԱԼ տմուց օց ՚մոմեկ

շետքի մազցցնվելայցեմակվե խաղցյալու կիճզն
-դե զ վե զ ցնը առթեմու ցոկրեմենց ևս մյ
-ցողեւ :ց կիճզենց ցցունից մի մշտի ցողեւնի
-ևսոյ ևս մազցցնվելարդոյ ցոկրեմառ աւսեց
:ցիւնիցոյ մի տառապ եռախ մը ցողեւնա
-քամ շաս ցիւնու ու ցիճզենց վեցուն :Տղց
ցիւնու եռայուքի մի հայ վեցուն մի ցողեւնելու
-ուսու ցիւնեռառու ևյ մի կիճզենց ցոկրելու

յայ ի դր յղցիութեամբ մի այլ ձևկատ եվելիս
ուազինամելի ող ՝Ապղցուտիոց ող Ապղցուս
-աւուվեցոց ՝Ապղցուկոց այլ յղցամետ մի
աւ մաղցիօքաս ովուն ուազիվամից Նգառցոց
՝Աղցմանաշըռոաց առանիցիւշ ։ Յողցմանորիվ
կ յմեկիր մը բաւասոյ փոփոնի ։ Խովեցոց յղին
-դես ող յղցիասոյ կը՞ւլցը մի յցո՞ւստ միւրափի
ուայել կիբեղնդի ող ։ Եռակի յցաւարյ վշտ մը
յոհմանեղնետ առանիւի մկոց յղիվեղնդիք

վեղողուղաց ու վեղողուղ զդիթենիցց մի եղր
կու յշնչը վկինդնքի ՝յրիվեսպիտաւ աջառ
ամի ՝մշտիւսփետսուցու և յուտայու, ու ՝մալցուն
-առնեդք ։ զ յորյացուց մէշու յիշիվնենգք

զ կիբենելոյն զ տոկուզոյ զ կունցու-
նու զ կիբենելու աւ նշվ վեցուր զ սիմենել
մէվշտեւսու եցաւ յոցու մի պղցումենուքը
ու պղցումենսաւի աօց բաղդեպակի պիի վլրան
ուսպիսուն սվեճ?ց վլրագունալի ցոկույսպեշեան
վիմշտոց մարաց ցոկուանեղ լ գովառութամի եռա
մի բարդույցուսպառ ցիմոգուստու մառչուց պիլ
ուինայր աւ պայտադիմուու ասց պարան այ
ցուցելու ի եռ սվի եռամ ցուաղաւացն ցուելոյը
ցովաւսպառաւ ցոկուուք զ զորասեմքութու
աղցմիլի?ցոյն զ ցողմաւսեմիուուգ զոցմաւսուկն
ուրի վիրանուն միւնի ցիմունամը ունեցյաւու
պղցումենելու ցոկուուցաւ ու ցոկուաւ
ուոյր զ կուսու ցոյնանց հոկեյու ցուաղցումենի
եղանել ցոկուուց ուոյր և սաւու

: յուազգյովթւննիշ
յողմաց ողս կ յիխազ յանեմբ ալ եռաւած մի
խառ կ ցցվթւնսատի յակհատվեաինքնիք ալ մի
-պր դպազօվի՞ նի՞սասդի՞ դպազօվ դաւնու Ա

Առաջին պատճենը կազմվել է 1990 թվականի հունվարի 1-ին:

ԵՒՍՏՈՒՄ 'ՀԵՐԿՐՈՒԹԵՐՆ ՂԻԳՆՈՒՅՑ

ԱՎԱՐԱ ՎՈ ՂԻԳՅԵՆԻ

կան տեղեկագիրը, որը կը պարկերացներ Միութեանս տարեկան ընդհանուր գործունեութիւնը կրքական, մշակութային եւ այլ մարզերու առջնօրեամբ։ (Սոյն տեղեկագիրը կուտանք յաջորդ էջով):

Անցնելով Եիրական համարատուուռեան՝ կարգացուեցան 1972 տարեշրջանի հաշուեկիուը, հաշուեքննիչի տեղեկագիրը եւ 1973 տարոյ պիտնեի նախահաշիւը։ Այս կապակցութեամբ Եերկաներուն տեղեկութիւններ տրուեցան հասոյքներու եւ ծախսերու զուրջ։ Նաեւ եղան հարցումներ, որոնց տրուեցան գոմացուցիչ բացատրութիւններ։

Կարն դադարէ մը ետք ժողովը անցան նոր վարչականներու ընտրութեանց, փոխարէն դադրած երեք վարչական անդամներու։ Ուստի վերընտրուեցան ՊՊ. Հայկ Իր ստեան, Ժագ Մեսրոպեան եւ ընտրուեցան Պր. Յակոբ Մ. Բամպուրնեան։ Պր. Կարօ Ներեւեան եւս վերընտրուեցան հաշուեքնիչի պաշտօնին։ Ժողովը փակուեցան ժամը 11ին։

Նրբ օրը վարչութիւնը գումարեց իր առաջին նիստը, ուր ընտրեց իր դիմանը նետեւեալ ձեւով։

**Տեարք.- ՅԱԿՈԲ ԷՔՍԵՐՃԻԱՆ Ատենապետ
ԺՈՐԺ ՄԻԳԱՅԵԼԵԱՆ Բ. Ատենապետ
ՆՈՐԱՅԻ ՏԵՇՎԱՐԵԱՆ Ատենապիր
ՀԱՅԿ ԻՐԱՏԵԱՆ Գանձապետ
ԺԱԳ ՄԵՍՐՈՊԵԱՆ Խորհրդական
ՅԱԿՈԲ ԺԱՄԿՈՉԵԱՆ »
ՅԱԿՈԲ Մ. ԲԱՄՊՈՒՐՆԵԱՆ »**

Այժմ կուտանք 1972 տարեշրջանի բարոյական տեղեկագիրը։

Գահիրէի Հ.Բ.Բ.Միութիւն Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ 30 Յունիս 1972ին։ Հստ օրինի գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցան երեք վարչականներ, յանձնինն ՊՊ. Յակոբ Էքսէրճեանի, Նորայր Տէօլէթեանի եւ Յակոբ Ժամկոչեանի։

Նորընտիր Վարչութիւնը իր առաջին նիստին, որ կայացաւ նոյն օրը, ընտրեց իր դիւանը հետեւեալ ձեւով։

**ՊՊ. ՅԱԿՈԲ ԷՔՍԵՐՃԵԱՆ Ատենապետ
ԺՈՐԺ ՄԻԳԱՅԵԼԵԱՆ Բ. Ատենապետ
ՆՈՐԱՅԻ ՏԵՇՎԱՐԵԱՆ Ատենապիր
ՀԱՅԿ ԻՐԱՏԵԱՆ Գանձապետ
ԵՐՈՒԱՆԴ ԹԱՇՃԵԱՆ Խորհրդական
ԺԱԳ ՄԵՍՐՈՊԵԱՆ »
ՅԱԿՈԲ ԺԱՄԿՈՉԵԱՆ »**

ԱԴԲԱՑԵԱԼ.-

1972 տարեշրջանին Միութիւնս կորունցուց իր հետեւեալ արժանաւոր անդամները՝ Նուպար Պալաեան, Մարի Սոսյեան, Գասպար Վարդուկեան, Վահէ Պոյաճեան, Խաչիկ Մետալեան, Ժագ էսելիւեան և Յակոբ Գ. Բամպուրնեան։ Այս տխուր պատեհութեամբ, Վարչութիւնս նամակով յայտնեց իր ցաւակցութիւնները ողբացեալներու պարագաներուն։

ԱՆԴԱՄՄԱԿԱՆ.-

Իրաւասու անդամներուն սոյն տարեշրջանը փակուած է 196 երկսեռ անդամներով, անցեալ տարուան 240 անդամներու փոխարէն, իսկ ոչ իրաւասու անդամ ունեցած ենք 5 անդամ, 34 անդամներու փոխարէն։ Հստ մեր կանոնագրին, վերըլիշեալ բոլոր անդամները 1972 տարեշրջանին կատարած են իրենց անդամական պարտականութիւնները և ստացած են այս ժողովին մասնակցելու հրաւէրը։ Հոս ըսենք թէ Վարչութիւնս արդէն սկսած է ձեռնարկել անդամարցաւի և ցարդ արձանագրած է 16 նոր անդամներ։ Վստահ ենք թէ շատեր ևս սիրով պիտի ընդառաջն մեր փափաքին։

ՏԵՂԵԿԱՑՈՒԹԻՒՆ.-

Անցեալ տարեշրջանին կամքէ անկախ պատճառներով կարողացանք հրաւարակել միայն մէկ թիւ Տեղեկատու Պարբերաթերթէն, Սեպտեմբեր ամսուայ ընթացքին, նուիրուած՝ երգիծագիր Յակոբ Պարոնեանի ծննդեան 130 ամեակին։ Տեղեկատուն, որ ձրիօրէն կը բաժնուի Միութեանս Գահիրէի և Աղեքսանդրիոյ անդամներուն, ծանր բեռ մըն է Վարչութեանս ուսերուն վրայ, ըլլայ ան նիւթական կամ գանազան

աշխատանքներու առընչութեամբ։ Սակայն վստահ ենք թէ յիտ այսու պիտի շարու նակենք հրատարակել երեք ամիսը անգամ մը կանոնաւորապէս, աւելի ճոխացեալ բովանդակութեամբ։

1973ի ՊՄՏԻ ՕՐԱՑՈՅՑ..-

Ինչպէս ամէն տարի այս տարի ևս Միութեանս հրապարակ հանած պատի նորատիպ օրացոյցը, հասարակութեան ջերմ ընդունելութեանը արժանացաւ։ Տըպագրեցինք 590 օրինակ, շաբաթական թերթիկներով, ազգային-կրօնական տօնեալու յիշատակութեամբ և ազգային-մտաւորական գէմքերու պատկերներով։ Օրացոյցը զարդանկարուած էր Մհծ Վարպետ Մարտիրոս Սարեանի «Եշնանային Օր» գունաւոր նկարով։ Այս նկարը ուղարկուած էր Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէին կողմէ։ Հոս չնորհակալութեան խօսք կ'ուզենք Կոմիտէին։ Ուրախութեամբ կ'առձանագրենք թէ զրեթէ ամբողջութեամբ սպառած են սատարելով մեր Միութեան փրափականտին։

ԵՐԻՑԱՌԱՐԴԻՄՈՒԱՆ.-

Պէտք է ըսել թէ երիտասարդական շարժումը այս տարի ևս ունեցաւ աշխոյժ գործունէութիւն մը։ Ուրբաթ, 7 Յունուար 1972ին, տեղի ունեցաւ Բնդունելութիւն-թէյանդան մը, ի պատիւ Հ.Բ.Ը.Միութեան՝ ովակիմեան սաներուն, նոր Տարւոյ և Ա. Ծնունդի առթիւ, Միութեանս հաւաքավայրին մէջ, նախագահութեամբ Մասնաժողովիս նախկին ատենապետ Պր. Հայկազուն Քիւրքճեանի և կազմակերպութեամբ երիտասարդական Մշակութային Մարմինին։ Ուրբաթ օրերը անոնք ունեցան իրենց հերթական հաւաքոյթները, ըլլան անոնք հարցամրցումներ, վիճաբանեական երեկոներ, մշակութային խաղեր կամ շարադրութեան մըցումներ։ Այս հաւաքոյթներով հետապնդեց Պր. Աւետիս Մովսէսեան։ Մշակութային երիտասարդական Մարմինը իր մասնակցութիւնը բերաւ նաև երիտասարդական Փառատօններու և Միութեանս սարքած ձաշկերոյթ-Փառատօնիրութեան, գեղարուեստական բաժ-

նով։

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՍԱՆԵՐ..-

Կ'ուզենք ըսել թէ սերտ դորժակցութիւն կայ Մասնաժողովիս և Կեդրոնական Յանձնաժողովին ինչպէս նաև Յովակիմեան Սանուց Յանձնախումբին միջեւ։

Ուստի 1972-73 տարեցրջաններու, Յովակիմեան կրթաթոշակով Միութիւնս կը պահէ 6 սանուուհի և 14 սան, որոնցմէ 4 երկուու սաները Աղեքսանդրիս և 16 սաներ ալ Գահիրէ կը գտնուուին։ Ստորեւ կուտանք անոնց յաճախած վարժարաններուն անունները։

Գահիրէի 16 սաներէն 7ը՝ Տանպոսքոյի արհեստագիտական Վարժարանը կը յաճախէն, երկու սաներ Տար էլ Սալամ արհեստից Վարժարանը, երկու սաներ՝ Սենթ Փորժ Գոլէճ, երեք սաներ՝ Գոլէճ էլ Սալամ, մէկ սան՝ Պոն Փասթէօր և մէկ սան ալ Ֆրանսիսքէն Քոյրերու վարժարանը։

Աղեքսանդրիս՝ մէկ սան Տննպոսքոյի արհեստագիտական Վարժարանը, մէկ սան՝ էլ Նասր Պոյզ Սքուլ, մէկ սան՝ էլ Մանար Կըրլզ Սքուլ և մէկ սան ալ Սէնթ Ժան Անթիթ։

Վերայիշեալ սաներուն կրթաթոշակներու և յարակից ծախսերու համար սահմանուած է մօտաւորապէս 1170 Ե.Ա.։

ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ..-

Շաբաթ, 21 Հոկտեմբեր 1972 կ.հ.ժամը 9.30ին, Հ.Մ.Ը.Մ.-Նուպարի մարզաքարանին մէջ տեղի ունեցաւ ձաշկերոյթ-Պատուասիրութիւն մը, ի պատիւ Հ.Բ.Ը.Միութեան Գահիրէի նոր Վերթերան անդամներու, հովանաւորութեամբ՝ հգիպտահայ Հոգեւոր Պետքրուն և նախագահութեամբ Հ. Բ. Ը. Միութեան Կեդրոնական Յանձնաժողովի յարգելի ատենապետ՝ Պր. Յովհաննէս Քէհեաեանի։ Այս հանդիսութեան ընթացքին տեղի ունեցան գնահատանքի խօսքեր, ուղերձներ նաև գեղարուեստական պատշաճ յայտագիր։ Այսպէսով Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան ըստւար վերթերաններու անուանացներին վրայ աւելցան 15 նոր անուններ, որոնք են հետեւեալները։ ՊՊ. Աղեքսանեան Արամ, Աւագեան Արա, Գալֆայեան Նազարէթ,

**Հ.Մ.Լ.Մ.-ՆՈՒՊԱՐԻ
ՄԵԾ ՔԵՐՄԵՍ-ՊԱԶԱՐԸ**

Թաշգաբուլեան Յակոր, Թումայեան Կարապետ, Ժամկոչեան Յակոր, Կիւլեան Եղւարդ, Մեսրոպեան Անդրանիկ, Զէրչեան Կարապետ, Սարեան Վահան, Սմարեան Յակոր, Տատուր Արմէն, Տօնիկեան Յովհաննէս, Քիւրքճեան Հայկազուն և Քիւրքճեան Տելեմաք:

Այս առթիւ մասնաւոր չնորհակալութեան խօսք ունինք, Եգիպտահայջ Հոգեւոր Պետերուն, օրուան նախագահին, նուիւրատուներուն, Հայ Մամուլին, գեղարւեստական բաժնին մասնակցողներուն, նաև իրենց ներկայութեամբ ընդունելութիւնը պատուող հաստրակութեան: Նոյնպէս չնորհակալութիւն կը յայտնենք Հ.Մ.Լ.Մ.-Նուպարի Վարչութեան, որ սիրայօժար տրամադրեց մարզադաշտը, ընձեռելով ամէն գիւրութիւն: Ինչպէս նաև Հ.Մ.Լ.Մ.-Նուպարի Տիկնանց Յանձնախումբին, որոնց կը պարտինք օրուան համեղ ճաշերու պատրաստութիւնը: Նաև բոլոր անսնք որոնք աշխատեցան ոսյն ճաշկերոյթին յաջողութեանը համար:

ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՇ, ԳՐԱԴԱՐԱՆՆ...

Մեր բարեյիշատակ հիմնոդիրներէն ետպուալ Արթին Փաշայի անսւան ի յիշատակ գրադարանը, այժմ բաւական ճոխացած է: Մասնաւորապէս հայրենի կառավարութեան դրկած հրատարակութիւններով: Բացի գիրքերէ կը ստանանք նաև թերթեր և պարբերաթերթեր, որոնք իրենց առաքումներով կը քաջալերեն հայապահպանման գծով մեր տարած համեստ աշխատանքը:

ԾՆ. ԱՐԴՅՈՒՆԱԼԻՔԻՔ...

Վերջացնելէ առաջ մեր այս ամփոփ տեղեկագիրը, կը փութանք մեր ջերմագին չնորհակալութիւնները յայտնել Եգիպտոսի բարեխնամ կառավարութեան և անոր վսիմաշուք Նախագահ՝ Անուար Էլ Սատաթին: Այս առթիւ արար հիւրնկալ ժողովուրդին կը մաղթենք զրաւեսու հողերու պատագբում և արար ազգին գերագոյն գտումնեմներու իրականացում: Ընկերային Գործոց Նախարարութեան, Պետական Շրջանային Կեդրոնին և էզպէքիէի Պահականոցի պաշտօնատարներուն, որոնց կը պարտինք մեր մշակութային

Կիրակի, 27 Մայիս 1973ին, տեղի ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.-Նուպարի մեծ Քիւրքճու-Պազարը նախագահութեամբ Միութեանս Կեդր. Յանձնախուզովի Ատենապետ և Մարզարանի Պատուոյ Նախագահ Տէր և Տիկ. Յովհաննէս Քէհեաեանի:

Մարզագաշտը լի էր բոլոր համակիր անդամ-անդամուհիներով, որոնք եկած էին գնահատելու Միութեան Տիկնանց Յանձնախումբի կողմէ հրամցուած նրբաճաշակ գործերը:

Օրուան բացման յայտարարութեան յաջորդեց, ի գիմաց կազմակերպիչ մարմնին՝ Պր. Հայկազուն Քիւրքճեանի ուղերձը: Ան հանգամանուրէն անդրադարձաւ կատարուած աշխատանքներուն կարճ ժամանակի մէջ իրագործման շուրջ, որուն իրենց օժանդակութիւնը սիրայօժար բերած էին Տիկնանց Յանձնախումբի անդամուհիներուն հետ ազնուափայլ տիկիններ և օրիորդաց հոյլ մը:

Ներկաները առիթը ունեցան ստուգելու և գնահատելու հրամցուած բազմապիսի նիւթեղէններու, առարկաներու, նրբահիւս բանուածքներու ստեղծագործութեանց համար գրուած ճաշակը:

Ապա տեղի ունեցաւ վարչութեան նախաձեռնած պարգեւածոր վիճակահանութիւնը, իներկայութեան Պր. Յովհ. Քէհեաեանի: Առաջին պարգեւն էր իտէալ սառնարան մը, երկրորդ՝ սոկեայ մատանի մը, երրորդ՝ սոկեայ Նէֆէրթիթի մը, կար նաև

գործունէութեան հսկագութիւնը սմէնայն ազատութեամբ և զուտ հայկական շրջանակէ ներս: Նոյնպէս կ'արձանագրենք մեր չնորհակալիքը Միութեանս կեդրոնական Յանձնախուզովի պատուարժան վարչութեան, որոնք անվան գրադարան գրադարանու մեր կեանքը լուսագարզող՝ Հ.Բ.Լ.Միութիւնը:

ՎԱՐՉՈՐՈՒԹԻՒՆ



Տեր եւ Տիկին Յովհաննես Քենեաեան ՔէՐՄԵՍ - ՊԱԶԱՐԻ բացման պահուն
աշխատուած բարձ մը, սեղանի ծածկոց մը
և հագուստներու կերպասներ:

Այս առթիւ տեղեկացանք, թէ ա-
կումբին շուրջ քաշուած է ցանկապատ
մը, որ արժած է աւելի քան 1000 Ե.Ռ.:
Ներկաները ըմբուշնելէ ետք այս խիստ
հաճելի օրը հրաժեշտ առին երեկոյեան:

Զերմօրէն կը շնորհաւորենք Հ.Մ.Լ.

Մ.Դ. ուպարի օրուան Նախագահը, Վար-
չութեան անդամները, Տիկնանց Յանձնա-
խումբի անդամունիսերը, ու անոնց կողքին
Օրիորդաց Յանձնախումբը, ինչպէս նաև
բոլոր անոնք որոնք ջանք չէին ինայած
այս ձեռնարկին յաջողութեանը համար,
մազթելով նորանոր յաջողութիւններ:

ՆԵՐԿԱՅ Մ.Լ.

Հ.Մ.Լ.Մ. - ՆՈԽՊԱՐԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 10 Յունիս 1973ին, անդամներու մնած թիւի մը մասնակցութեամբ,
տեղի ունեցաւ անդամական ընդհանուր ժողովը, որուն ընթացքին կազմուեցաւ նո-
րընտիր վարչութեան դիւանը հետեւեալ կերպով: —

Տեարք.՝ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՇԱՀՊԵՆՏԵՐԻԱՆ

ՅԱԿՈԲ ԺԱՄԿՈՉԻԱՆ

ՀՐԱԶ ՍԻՄՈՆԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԱԲԳԱՐԵԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԺԱՎԱԳԵՏԵԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Ա.ԲՐԱՀԱՄ ՍԻՄՈՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՄԻՆՆԵԹԵԱՆ

Ա.ՄԵՆԱՊԵՏ

Ա. ՓՈԽ-ԱՄԵՆԱՊԵՏ

Բ. ՓՈԽ-ԱՄԵՆԱՊԵՏ

Ա.ՄԵՆԱՊԵՏԻՐ

ԳԱՆՃԱՎԵՏ

ԽՈՐՀՈՐԴԱԿԱՆ

»

»

»

Կը շնորհաւորենք Հ.Մ.Լ.Մ.-Նուպարի նորընտիր վարչութիւնը և արդիւնա-
ւէտ գործունէութիւն կը մազթենք իրենց:

ԺԻՐԱՅԻ ՓԱՓԱԶԵԱՆԻ ԱՍՄՈՒՆՔԻ ԵԼՈՅԹՆԵՐԸ

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ Հ. Բ. Ը. ՄԻԱԽԹԵԱՆ

Բոլորիս ծանօթ և համակրելի արւեստագէտ և Միութեանս անդամ՝ ժիրայր Փափազեան, որ այժմ Մայր Հայրենիքի մէջ, մասնագիտանալով բեմագրութեան եղերասանական արուեստներուն, թատերական ինստիտուլին մէջ, վերջերս այցելեց կարգ մը երկիրներ, ուր տուաւ ասմունքի բացառիկ երեկոներ:

Առաջին առթիւ ան այցելեց Մբանսաւ և երկուշարթի, 5 Փետրուար 1973ին, Փարլզի Անթրոցի սրահին մէջ տուաւ իր առաջին երեկոյթը նախաձեռնութեամբ Հ. Բ. Ը. Միութեան և ի ներկայութեան գեղարուեստանէր հասարակութեան մը:

Երիտասարդ արուեստագէտ ասմունքեց Պ. Մասիկեանի «Ասմունքողը», Ա. Չեխովի «Երուեստի ստեղծագործութիւնը», Վ. Թէքէեանի «Բաց ծովուն մէջ»ը, Շ. Շահնուրի «Նահանջ առանց երգին»ը, Յ. Թումանեանի «Մի կաթիւ մեղր»ը Գ. Էմինի «Ախ այս Մասիսը», Ե. Ալէն Բոլի «Ազուա»ը, Ա. Կիթրիի «Երազանք»ը, Կ. Զարեանի «Ասացուած կախաղան բարձրացողի համար»ը, Յ. Շիրազի «Դու չըթունքներ ունես»ը, Գ. Էմինի «Երգ Երգոց»ը և Գ. Վարուժանի «Ով Լալազէն ֆրանսերէն լեզուով»:

Զայնի զիմախաղերու, աշգտանշարժումի և ներշնչումի սքանչելի ներգանակութեամբ մը ժիրայր Փափազեան կարողացաւ գործերէն իւրաքանչիւրին էութիւնը և գեղարուեստական նշանակութիւնը ներկայացնել ունկնդիր հասարակութեան:

Երկրորդ ձեռնարկը տեղի ունեցաւ Տիթրոյթի Հ. Բ. Ը. Միութեան Ալեք Մահուեկան Վարժարանի սրահին մէջ, Հինգչարթի, 8 Մարտ 1973ին, ուր չատեր հարկագրուե-

ցան ստքի վրայ ունկըրելու յայտագիրը, հօծ բազմութեան մը ներկայութեան պատճառաւ:

Չեւնարկին բացումը կատարեց Հ. Բ. Ը. Միութեան Տիթրոյթի Արանց Մասնաճիւզի ատենապետ Պր. Միհրան Քիւփելեան, ապա բեմ հրաւիրեց Տիթրոյթի Թէքէեան Մշակութային Միութեան նորընտիր ատե-



Պր. Ժիրայր Փափազեան ասմունքի պահուն

նապետ Տոքթ. Փան Փարթամեան, ներկայացնելու օրուան արուեստագէտը:

Քիչ յետոյ արդէն բեմին վրայ էր տուղանքաւոր ասմունքողը, ու Պ. Մասիկեանի մէկ երգիծական գրաւթեան առոյց ներկայացնումը, արդէն տոինքնեց ներկաները:

Իր յայտագրին մաս կը կազմէին

Հ.Բ.Ը.Մ. ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻԲ ՄԱՐՄԻՆ

Հ.Բ.Ը.Մ.-Ի ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Մասնաւոր ուրախութիւնը ունինք հաստատելու որ Ալեք Մանուկեան Գրական Մրցանակը ամբողջ Արտասահմանի մէջ առաջ բերաւ մեծ հետաքրքրութիւն, և 70 երկեր, որոնցմէ շատերը արժէքաւոր՝ ներկայացուեցան մրցանքին։ Յատկապէս ուրախառիթ է այն պարագան որ Մրցանակը խթան եղաւ նոր երկերու յօրինումին և ամբողջացումին։ իր ստեղծած լուրջ շահագրգոռութեամբ և ցոյց տուած նկատառելի քաջալերանքով։

Այժմ հաճոյքը ունինք հրապարակելու միւ և վերջնական արդիւնքները մրցան-

նաև Ա. Զեխով, Գ. Ֆմին, Է. Ալէն Բօ, Վ. Թէքէեան, Ս. Կիթրի, Կ. Զարեան, Շ. Շահնուր, Յ. Թումանեան և ուրիշներ։ Յայտագրէն դուքս անզերէն լեզուով արտասանեց հատուած մը Շէյքսփիրեան թատերախաղէ մը։ Քանի կը յառաջանար յայտագիրը, այնքան ժողովուրդը կը ծափահարէր։

Գրական ու թատերական վայելքի իրական խրախճանք մըն էր, ներկայացւած այնքան ջերմութեամբ։

Դէպի երեան իր վերագրածի ճամբաւն վրայ, Ժիրայր Փափազեան, իր միենոյն յայտագիրը ներկայացուցած է նաև Թորոնթոյի մէջ Մարտ 11ին, և Մոնթբէալի մէջ Մարտ 13ին, յիշեալ քաղաքներու Թէքէեան Մշակ Միութեան Աանանի զերուն հրաւէրով։

Ժիրայր Փափազեանի ելոյթները երկար ատեն անմոռանալի պիտի մնայ ներկաներուն միտքին մէջ, միշտ ակնկալելով զինք տեսնել նոր ու բազմազան այլ յայտագիրներու մէջ։ Կը չնորհաւորենք երիտասարդ արուեստագէտ, Ժիրայր Փափազեանը, մազթելով նորանոր յաջողութիւններ։

ԹՂԹԱԿԻՑ

Քին։—

Ա. — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

1. — Գատական կազմի անդամներ՝ Փրոֆ. Յակոբ Խաչիկեան, Պրն. Զարեհ Մելքոնեան և Պրն. Երուանդ Աղատեան։

2.—Մրցանքը, — 1,500 տոլար, և երկին տպագրումը, — կը շահի՝ Պոլիսէն՝ Տաքթ. իգնա Սարբաւալան, իր «10» հատորին համար։

Բ. — ՊԱՏՄՈՒԱԾՔ ԵՒ ՎԵՊ

1. — Գատական կազմի անդամներ՝ Պրն. Սուրէն Մանուէլեան, Պրն. Արամ Հայկազ, և Փրոֆ. Յակոբ Էքմէքնեան։

2.—Առաջնութեան աստիճանին հասնող երկի մը չզոյսութեան պատճառով՝ Գատական կազմին կողմէ որոշուեցաւ մրցանակ չյատկացնել այս բաժինին մէջ։

Գ. — ԹԱՏՄՈՒՐԳՈՒԹԻՒՆ

1. — Գատական կազմի անդամներ՝ Պրն. Պերճ Ֆազլեան, Պրն. Գրիգոր Մաթամեան, Պրն. Գրիգոր Քէօսէեան։

2.—Մրցանակը, — 750 տոլար և երկին տպագրումը, — կը արուի՝ Պոլիսէն՝ Պրն. Արթօ Պէրպէրեանի՝ իր «Մկոյի Պատմութիւնը» երկին համար։

Դ. — ՈՒՍՏՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

1. — Գատական կազմի անդամներ՝ Փրոֆ. Աւետիս Սանճեան, Փրոֆ. Վարդան Գրիգորեան, Վերապատուելի Բիւզանդ Ռուպեան։ Երաժշտական նիւթերու վերաբերող ուսումնասիրութեանց համար՝ Գեր. Թորգում Արբազան Մանուկեան, Պրն. Համբարձում Պէրպէրեան և Պրն. Խաչիկ Փիլիկեան։

2.—Մրցանակը, — 1,500 տոլար և երկին տպագրութիւնը, — կը շահի՝ Երուանդակմէն՝ Տաքթ. Մարտիրոս Մինասեան, իր «Յատկացուցիչ-Յատկացեալ կապակցութիւնը Գրաբարում» երկին համար։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

1.— Կը վերադառնուին այս ձեռագիրները, որոնց հեղինակները այդ փափառքը կը յայտնեն գրաւորապէս մինչեւ Յուլիոս 31, 1973:

2.— Ալեք Մանուկեան Մրցանակը ամէն տարի տրուող մրցանակ մը չէ. Յաջորդ մրցանքին պայմանները և թուականը պիտի ծանուցուին 1974-ի սկզբը: Ուրեմն՝ գրողներէն կը խնդրուի այդ ծանուցումին բովանդակութեան տեղեակ ըլլալէ ետք միայն զրկել իրենց նոր երկերը:

3.— ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ. —

Հետեւել կէտերը ուշադրութիւնը գրաւեցին Գործադիր Մարմինիս՝ Ալեք Մանուկեան Գրական Մրցանքին առիթով, զանոնք կ'ուզենք ուշադրութեանը յանձնել ընթերցող հասարակութեան, ինչպէս նաև գրողներուն:

Ա. — Ընդհանուր կէտեր. —

ա.— Տարեց, և անունի հասած մեր գրողներէն շատերը չմասնակցեցան մըրցանքին: Դիմաւոր պատճառը այս երեւոյթին, հաւանաբար ունի երեք բազկացուցիչ մասեր. Առաջին՝ այդ տարեց կամ անունի հասած գրողները չունեին աւարտած ձեռագիրներ, և կամ՝ չունեին արամադրութիւնը նոր գործեր արտադրելու, երկրորդ՝ մեր մրցանքին առաջին տարին ըլլալուն՝ չէին ուզեր աճապարել, երրորդ՝ կը խուսափէին մրցակցութեան մասնակցելէ:

Մեր փափաքն է որ Սփիւռքահայ անուանի գրողներն ալ, ինչչպէս նաև տարեց գրողները՝ մեծաթիւ մասնակցին մեր մրցանքին՝ ըլլայ արդէն պատրաստ ձեռագիրներով և ըլլայ մանաւանդ՝ նորագոյն ստեղծագործութիւններով: Մենք ջանք պիտի չխնայինք բարձր մակարդակի վրայ պահելու մրցանքը՝ կարելիութեան սահմաններուն մէջ: Անոնց մասնակցութիւնը միծապէս պիտի նպաստէր մեր ջանքերուն յաջողութեան:

բ.— Գործնականութեան և լաւագոյն արդիւնքի մտահոգութեամբ՝ անջատ դատական կազմեր որոշուած էին մրցանքին

չորս մարզերուն համար, և Դատաւորները նշանակուած էին մրցանքին փակումէն ետք՝ առիթ տալով բոլորին որ մասնակցին: Ուրախ ենք որ բոլոր Դատաւորներն ալ որակաւոր կազմական անձեր էին: Այս կապակցութեամբ դիտելի են հետեւել կէտերը — Առաջին՝ Արձակի երեք Դատաւորներն ալ Ամերիկային էին, երեքն ալ առաւելաբար աւանդական հակումի տէր անձեր, երեքն ալ ոչ-երիտասարարդ: Երկրորդ՝ Թատերական բաժնի Դատաւորները երեքն ալ Պէյրութէն էին, երեքն ալ յառաջապահ հակումի տէր. երեքն ալ ոչ-տարեց: Երրորդ՝ Ուսումնասիրութեան մարզի Դատական կազմի անդամները, վեցն ալ Ամերիկային էին: — թէեւ Մերձաւոր Արեւելքին, — երեքը Հայագիտութեան դասախոս Ամերիկան համալսարաններու մէջ, միւս երեքը մամնագէտներ երաժշտութեան մէջ: Չորրորդ՝ Բանաստեղծութեան կալուածին երեք դատաւորներն ալ գրողներ էին, երեքն ալ միջին տարիքի և Մերձաւոր Արեւելքին գաղթած երեքն ալ իրենց հակումներով կը ներկայացնէին միջին դիրքաւորում մը՝ որոշակի թեքումով մը գէպի յառաջապահը:

Արդ, նշմարելով հանգերձ նման դասուորումի մը անխուսափելի հետեւանքները՝ կը խորհինք թէ Դատական կազմերուն որոշումները եղան արդար և որակաւոր կարելիութեան սահմանին մէջ:

Գ. — Պէյրութը, որ կը նկատուի մը շակութային կեգրոնը Սփիւռքի՝ կը բացակայէր զգալիօրէն թէ՛ իր տարեց գրողներով և թէ նորերով: Առաջիններով՝ Այս երեւոյթը չենք ուզեր վերագրել միւմիայն վերապահ կեցուածքի մը կամ մըրցակցութենէ խուսափումի. Հարցը կը թուի արժանի ըլլալ մամնաւոր ուշադրութեան:

Բ. Մասնակի կէտեր. —

ա.- Բանաստեղծական երկերը, — անոնցմէ խուսափ մը ամբողջ, — գործն էին տաղանդաւոր արուեստագէտներու, և հետեւաբար գծուալին կացութեան մը առջեւ կը գնէին Դատաւորները: Այս կապակցութեամբ՝ Գործադիր Մարմինս որոշեց որպէս գնահատանքի արտայալտութիւն՝ ըս-

տանձնել տպագրութեան ծախքը կարգ մը երկերու:

Ոչ-Պոլսեցիներու համար անձանօթ մը՝ Տաքթ՝ Խզնա Սարըասլան, կը շահէր մըցանակը. մասնառը յիշտակութեան կ'արժանանային ուրիշ երկու պոլսեցիներ՝ Մկրտիչ Հաճեանն ու Զարեհ Խրախունին, ինչպէս նաև ուրիշ շատերու համար նոր անուն մը կոլիա Տէր Յովհաննէսեանը Թէհրանէն: Այս առնչութեամբ պէտք է յիշտակել անունը պէյրութթահայ Վեհանոյշ Թէքեանին, որ միակ ներկայացուցիչն էր նորագոյն սերունդին, և որուն գործը կարելի է նկատել ուշագրութեան արժանի խոստում մը:

բ.— Գեղարուեստական արձակը,— վէպ և պատմուածք, — չէր համներ ակըն-կալուած նուաճումին, թերեւս նաև այն պատճառով որ շատ մը տաղանդաւոր ար-ձակագիրներ չէին մասնակցած: Այսուհան-դեր պէտք է յիշտակել անունը Նուապար Ալիշեանին, որուն պատմուածքները երեւան կը բերէին հասկացողութեան տէր և համարձակ երիտասարդ գրող մը:

գ.— Թատերական մարզին մէջ ևս՝ թիւի և նաև որակի տեսակէտէն՝ իշխողն էր Պոլիսը, թէեւ այս կալուածը ևս յարա-բերաբար նուազ զօրաւոր էր և ընդհան-րապէս չէր լրացներ արգիտական բեմին բուլոր պահանջները: Անշուշտ գաղտնիք մը չէ թէ թատրերովութիւնը կը կարօտի աւանդութեանց և բեմական եռուն կեան-քի: Այս առնչութեամբ պէտք է նշել թէ Պէյրութը ունեցած է, գէթ վերջին երկու տասնամեակներուն, հաստատուած թատե-րախումբեր և որոշ բեմականք և ուրեմն ակնկալելի էր որ հոն մանաւանդ արտադրուէին թատերախաղեր և երեւան դային թատերագիրներ:

դ.— Բացի կարգ մը շատ լուրջ աշ-խատափրութիւններէ ուսումնասիրութեանց շարքին մէջ կային նաև այնպիսիներ, ո-րոնք կրնային որպէս կորիզ ծառայել ար-ժեքաւոր նոր գործերու: Գործադիր Մար-մինս, նկատի ունենալով այն հսկայական աշխատանքն ու ժամանակը որոնք անհը-րաժեշտ են ուսումնասիրութեանց պատ-

րաստումին համար՝ որոշեց քաջալերել այդ կարգի երկերուն հեղինակները՝ առիթ տալով որ անոնք վերամշակեն իրենց գոր-ծերը: Մեծապէս փափաքելի կը գտնենք որ մեր յաջորդ մըցանքին ներկայացուին եր-կեր նաև երիտասարդ բանասէրներու:

4.— ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ա.- Գործադիր Մարմինս կը խորհի թէ լուրջ և որակաւոր Գրական Մրցանք մը կրնայ ստեղծել հետաքրքրութիւն, յառաջ բերել մըցակցութեան ոգի, խթան հանդի-սանալ նոր երկերու յօրինումին:

բ.— Գործադիր Մարմինս խորումկ յոյսը ունի թէ իւրաքանչչեւր նոր մըցանք որ կը կազմակերպուի իր կողմէ՝ պիտի գերազանցէ նախորդը թէ՛ իր կազմակերպ-չական կիրարկումով, թէ՛ իր ծրագիրով, և թէ իր որակով:

գ.— Գործադիր Մարմինս կողմէ ծրագրուած է յաջորդ Ալեք Մանուկեան Գրական Մրցանքը ծանուցանել 1974-ի ըս-կիզը՝ մէկ տարուան պայմանաժամով, հիմակուրնէ հետաքրքրուողներու տալով շուրջ երկու շրջան մը՝ աշխատանքի հա-մար:

դ.- Մեր ջերմ փափաքն ու ակնկա-լութիւնն է՝ որ աւելի մեծաթիւ գրողներ, — տարեց, անուանի թէնոր ու նորագոյն, մասնակցին մեր յաջորդ մըցանքին՝ ա՛ւ աւելի որակաւոր ու նոր ստեղծագործու-թիւններով:

ե.- Գոհ պիտի մնանք եթէ արուես-տագէտներ ու մտաւորականներ մեզի փո-խանցեն իրենց մատնանշումներն ու կար-ծիքները՝ մըցանքին, և առ հասարակ՝ մըցանքի գաղափարին մասին:

զ.- Պարտ կը զգանք մեր մասնաւոր չնորհակալութիւնները յայտնելու Դատա-կան կազմերու անդամներուն, մասնակցող գրողներուն, մեր ծանուցումները արտատը-պող թերթերուն, և յատկապէս Հիմնագր-րամին նախագահին: Տիար Ալեք Մանուկ-եանին, որոնք սէրն ու հետաքրքրութիւնը

Հ. Բ. Ը. Միութեան Հիմնադիրներու օր- ուան տօնակատարութիւնը յատուկ շուքով մը նշուեցաւ Տիթրոյթի մէջ Կիրակի, 8 Ապրիլ 1973ին, Ս. Յովհաննէս Մկրտիչ ե- կեղեցոյ մշակութային սրահին մէջ հոծ բազմութեան մը ներկայութեան։ Կազմը- ւած էր ճոխ ու խնամեալ յայտագիր մը։

Հանդիսավարն էր տաղանդաւոր բա-
նաստեղծ և Հ. Բ. Ը. Միութեան Միջին Արեւ-
մուտքի վարիչ քարտուղար Պր. Զարեհ
Մելքոնեան, որ իր բացման խոսքէն ետք
հրաւիրեց օրուան բանախօսը՝ Պր. Երուանդ
Ազատեանը, որ կուռ ու բովանդակալից
ելոյթով մը անդրադարձաւ Բարեգործակա-
նի հիմնադրութեան և անոր առաքելու-
թեան։

Ապա տեղի ունեցաւ գեղարուեստա-
կան պատշաճ յայտագիր մը, որուն իրենց
մասնակցութիւնները բերին Հ. Բ. Ը. Միու-
թեան Ալեք Մանուկեան վարժարանի աշա-
կերտները խմբերգներով, զեկավարու-
թեամբ երգի ուսուցչուհի Օր. Փոլէթ Փո-
լատեանի, Հ. Բ. Ը. Միութեան Տիթրոյթի
«Վահապն» պարախումը, Ա. Մանուկեան
վարժարանի աշակերտները՝ արտասանու-
թեամբ և Տիկ. Նինէթ Մերսամէթճնեան՝
մեներգով։ Հ. Բ. Ը. Միութեան Տիթրոյթի
թատերախումը յաջող կերպով ներկայա-
ցուց Զ. Մելքոնեանի պատշաճեցումով
«Ռնիր առանց գիտի» թատերախաղը՝
զեկավարութեամբ Տիկ. Նորա Ազատեանի։
Բարեգործականի Միջին Արեւմուտքի

գէպի մէր մշակոյթը սահման չեն ճանչ-
նար։

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ
ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
Տիթրոյթ, Ապրիլ 2, 1973
Մեր հասցեն—

AGBU ALEX MANOOGIAN Literary Prize
22001 Northwestern Hwy
Southfield, Mich. 48075, U.S.A.

անդամարչաւի յանձնախումբին կողմէ
խօսք առաւ Տիկ. Վարսենիկ Աբգարեան որ
կոչ ուղղեց ներկաներուն անդամակցելու
միութեան, այս տարուան նոր անդամնե-
րուն թիւը բարձրացնելով 100ի։

Ապա անակնկալօրէն բեմ հրաւիրուե-
ցաւ Միութեան Կեդրոնական Վարչական
ժողովի երկարամեայ անդամ և փաստա-
բան Պր. Յակոբ Տէրտէրեան որ ուրախու-
թեամբ ծանոյց թէ Տիթրոյթարնակ Տէր և
Տիկին Արմենակ Սուլթանեաններ 100.000
տոլարի հիմնադրամ մը կը հաստատեն Հ.
Բ. Ը. Միութեան մօտ։ Հիմնադրամին եկա-
մուտք պիտի օգտագործուի Միութեան
հայ վարժարաններուն և առաջին հերթին,
Տեթրոյթի Ալեք Մանուկեան վարժարանին
համար։

Հանդիսութիւնը վերջ գտաւ Սիոն
Արք. Մանուկեանի պահպանիցով, որմէ
ետք ներկաները հիւրասիրուեցան սուրճով
և խմորեղէններով։ ԹՂԹԱԿԻՑ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՈՒՈՒԹԸՆԶ ԱՐԹ
ԿԱԼԵՐԻՆ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԵ ԻՐ ՀԱՅԿԱ-
ՎԱՆ ՄԱՆՐԱՆՎԱՐՆԵՐՈՒ ՀԱԻԱՔԱԾՈՆ
ՏԻՈՒՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ 10.000
ՏԱԼՈՒՐ ԿԸ ՅԱՏԿԱՑՆԵ ԱԽՅՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Ուաշինկթընի մօտ Պալթիմոր, Մե-
րիլինտի մէջ գտնուող համբաւաւոր Ռուլ-
թըրզ Ալթ Կալըրին արդէն տպագրութեան
յանձնած է իր Հայկական մանրանկարնե-
րու հաւաքածոն։ Թիւով մէծ չեն անոնք,
սակայն կը պարփակեն խիստ արժեքաւոր
գործեր, որոնցմէ ոմանք ունին համաշ-
խարհային նշանակութիւն։ Հրաւարակուե-
լիք մանրանկարները պիտի առնուին հաս-
տատութեան մօտ գտնուող 11 ձեռագիր-
ներէն, որոնք գրուած ու նկարագրուած

են 10 և 16-րդ դարերու միջեւ։ Օրինակ, «Թարգմանչաց Աւետարանը» գրչագրուած է 966 թուբին և Ամերիկայի մէջ գտնուող ամէնէն հին ձեռագիրներէն մէկն է, եթէ ոչ ամէնէն հինը. իսկ նկարագրագրուած գիրքերու կարգով աշխարհի մէջ չորրորդն է։

Հրատարակուելիք գիրքին նախաբանը և ուսումնասիրութիւնը գիտական արժենուումով միատեղ, կատարած է միջազգային հեղինակութիւն մը, յանձին Փրոֆ. Սիրարփի Տէր Ներսէսեանի։

Այս ձեռագիրները Ամերիկայի մշակութային հարստութեանց մաս կազմելուն, անոնց հրատարակութեան համար Ամերիկեան պետութեան Նեշընը ինտառումընթը յատկացուցած է 21,649 տոլար։ Հատուրին հրատարակութիւնը պիտի արժէ ճիշդ այդ գումարին կրկինը, զոր հարկագրուած էր գոյացնել կալըրին։

Շնորհիւ հայ ականաւոր նուիրատուաներու ան կարողացած է գոյացնել մնացեալ գումարը։

Անշուշտ նուիրատուաներու ցանկը կը գլխաւորէ, ինչպէս միշտ, հայ գաղութիւկանաւոր զեկավար և մհանուն բարերար Տիար Ալեք Մանուկեան 10,000 տոլարի գումարով մը։

Տիար Մանուկեանի գաղափարով կաւորին իր բուն, գիտական քաթալոկին կողքին, միեւնոյն գունաւոր նկարներով, պիտի հրատարակէ 5000 տպաքանակով ժողովրդային գրքոյկ մը, որպէսզի յիշեալ մանրանկարները չսահմանափակուին միայն մասնագէտներու և գրագարաններու շրջանակին մէջ, այլ մատչելի ըլլան հայ թէ օտար արուեստասէր հասարակութեան, որ վստահաբար շատ բան ունի սորվելիք հայ արուեստի միջազգային տարագութեան մասին։

«ՏԵՂԵԿԱՏՈՒ»Ի ԳՈՆՏԻՆ

Առ ի քաջալերութիւն Պարբերաթերթիս ուղղութեան, հետեւեալ նուիրատուութիւնները ստացանք։

Տէր և Տիկ Արամ Գալաջեան	100
Ամն	100
Օր. Անահիտ Քարբերդեան	50

ՄԵՐ ՈՒՍՏԱՆՈՂՆԵՐՈՒՆ ՍԻՒՆԱԿԸ

Ի՞Չ Է ԱԹՐՄԸ

Մարմնի ամէնափոքը մասնիկը կը կոչուի «Աթոմ»։ Այժմ մօտաւորապէս հարիւրէ աւելի մարմիններ կան, որոնք իրարու միանալով կը կազմեն մեր այս պղտիկ երկրագունդը։

Աթոմը ըլլալով ամէնափոքը մասնիկ մը, իր կարգին կազմուած է հետեւեալ հետաքրքրացարժ մասերէն։

Ա. Ելեկտրոններէ - Electrons

Բ) Փրոթոններէ - Protons

Գ) Նիութրոններէ - Neutrons

Փրոթոնները և նիութրոնները հաւաքարար կը գտնուին կեղրոնի մասը, որ ծանօթ է իրեւ neucleus: Ելեկտրոնները կը նկատուին որպէս միտական, իսկ փրոթոնները՝ զրական ուժ և այս երկու ուժերը միասնաբար զիրար կը չէզոքացնեն, իսկ նիութրոնները ոչ մէկ ուժ ունին։

Որեւէ աթոմական ելեկտրոններու համբանքը կը համապատասխանէ ուուլսի մէջ գտնուած նիութրոններու համբանքին։

Գոնուած բոլոր մարմիններուն ամենէն պարզը ջրածինն է, որ ունի միայն մէկ հատ ելեկտրոն հետեւար և մէկ հատ փրոթոն։ Ելեկտրոնները անվերջ կը գառնան ուուլսի շուրջ մեկէ աւելի շրջանակւներ (orquides) կազմելով և արտաքին շրջանակին մէջ գտնուած ելեկտրոններու համբանքը կը ներկայացնէ այս մարմնոյն valencyին։ Այս ելեկտրոնները կը կոչուին ազատ, որովհետեւ անմիջապէս կը միանան ուրիշ մարմնի մը, ուրեմն մարմինները կը զանազանուին իրարմէ իրենց արտաքին շրջանակին մէջ գտնուած ելեկտրոններու թիւերու քանակութեամբ։

Ընդհանրապէս փաստուած է թէ ամէն շրջանակ ունի որոշ թիւով ելեկտրոններ, որով առաջին շրջանակի երկու ելեկտրոններէ աւելի չունի, իսկ երկրորդը՝ ութը, երրորդը՝ 18 և չորրորդը՝ 32 ևայլն։ Մարմինները որոնց արտաքին շրջանակին մէջ գտնուած ելեկտրոններու թիւերու քանակութեամբ պակաս է, կը պատկանին ՄԵՑԱՂՆԵՐՈՒ

ՏԻԱՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ 50.000 ՏՈՒԱՐ

ՆՈՒԻՐԵՑ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՒԻ ՖԵՐՄԱՀԵԱՆ

Վ.Ա.Ր Ժ Ա Բ Ա Ն Ի Ն

Հու Աննելլսի մէջ Շաբաթ, 28 Ապրիլ 1973ին, կայսցած է տեղոյն Ֆերահեան վարժարանի նոր շենքի հանգանակուրեան մաշկերդը, որուն ընթացին գոյացած է աւելի քան 50,000 տուար: Ճաշկերդի ընթացին ծանուցուած է նաև թէ ազգային մեծանուն բարեւար և Հ. Բ. Բ. Միութեան ցկեան նախագահ Տիառ Աղիք Մանուկեան առանձին նուիրած է 50,000 տուար:

Հայ կրթական գործը մեր ազգապահուած առանձին կենսական գործուներին մէկն է, ուրախայի է որ այդ գործը իր առաջնահեռ կարեւուրեամ դիրին փրա կը դնէ ապօպայն խնասուն դեկադար մը, որ բարերախտարար ի վիճակի է նաև մեր մեծագոյն բարերարաներին մէկը կոչուելու իր օրինակելի զոհաբերութիւններով, որոնի վեր կը մնան առեն կարգի շերտառութերէ ու մասնողութիւններէ:

Գասակարգին, օրինակ՝ պլինծ, երկաթ եայլն, իսկ այն մարմինները որոնց արտաքին շրջանակին մէջ գտնուած ելեկտրաններու թիւը չորսէն աւելի է, կը պահանջին ՈՉ ՄԵԾԱՂ գասուն, օրինակ՝ քլոր, ֆուֆոր, եայլն:

Կան հազուագիւտ մարմիններ, ինչպէս իւրանիսմ, սորիտում և բատիտում, որնք ճառագայթներ կ'արձակեն, և այս մարմիններու աթումը կը բազկանայ մեծ թիւով ելեկտրաններէ և փրաթուններէ: Այս մարմիններէն արձակուած ճառագայթները կ'ազգեն լուսանկարչական գգայունն թուղթերուն վրայ և կ'անցնին մարմին մը զանազան մատերէն ես, ընդհանրապէս այս ճառագայթները կը կոչուին, ալֆա (գրական), պիթա (ժխտական), և կամա (չեզզոք): Այս երեք ճառագայթները ունին արեւի լոյսին ճառագայթներուն արագութիւնք:

ՄԻՍԱԿ ՇԱԼՃԵԱՆ ՈՉ ԵՒՍ Է

Եգիպտահայ գաղութիս ծանօթ աղայիններէն, հրապարակագիր, բանախօս, նախկին դասատու և Հ.Բ.Բ. Միութեան մեծ ընտանիքի հաւատաւոր վեթերան անդամներէն, ինչպէս նաև Փահիրէի Հ.Բ.Բ. Միութեան Տեղական Մասնաժողովի նախկին երկարամեայ քարտուղար և «Տեղեկատու» Պարբերաթերթի նախկին պատասխանատու խմբագիր Սիսակ Շալճեան իր մահկանացուն կնքեց երեքշարթի, 10 Ապրիլ 1973, կէս գիշերին, «Այծեմիկ» Հանգրասեան ջան մէջ, յետ երկարատեւ հիւանդառթեան, խոր սուգի մատնելով բոլոր զինք ճանչցողները:

Յուղարկաւորթեան տիսուր արարողութիւնը տեղի ունեցաւ յաջորդ օրը, Զորեքշարթի, 11 Ապրիլ կ. ե. ժամը 3.30ին, Հելլուպուսոյ Ամենայն Արքոց մատրան մէջ ներկայաւթեամբ Հ.Բ.Բ. Միութեան վարչութեան անդամներու և համակիրներու, որոնք եկած էին իրենց յարգանքի վերջին տուրքը մատուցանելու անոր:


Ապա ներկաները ուղղուեցան հանգուցեալին ընտանեկան շիրմին առջեւ, ուր հոգեհանգստեան ազօթքներով, փոտին մէջ զետեղուեցաւ հեքողը. Սիսակ Շալճեանի յոգնաբեկ մարմինը:

Ի գիմաց Փահիրէի Հ.Բ.Բ. Միութեան յուղիչ գամբանեկան մը խօսեցաւ Պր. Նորայր Տէօվլէթեան, անդրագանալավ անոր կեանքին ու գործին: Այս տիսուր առթիւ ծաղկեպսակ մը զրկուած էր Փահիրէի Հ.Բ.Բ. Միութեան Տեղական մասնաժողովին կողմէ:

Ան ծնած էր Պոլիս 1893ին: Ունեցած է քեզուն գործուներթիւնն մը, աշխատակցելով Եգիպտահայ Մամուլին: Բանի մը ատրիներ, եղած է վաստակաւոր ուսուցիչներէն Աղեքսանդրիոյ Պօղոսեան Աղք. վարժարանին մէջ: Թարգմանած է հայերէն լեզուի կարգ մը ֆրանսական վեպեր և թատրերգութիւնները: Ան տարիներ շարունակ մաս կազմած է Հայկական Ընթերցարահայ վարչութեան և վերջադադէս Միու-

ԳՐԻԳՈՐ ՊԱՍՏՈՐԵԱՆ ՈՉ ԵՒ Է

Ծարաք, 2 Յունիս 1973, Գահիքը
«Տեմերտաշ» հիւանդանոցին մէջ նոզին ա-
ւանդեց Ազգային Առաջնորդարանի դի-
ւանապետ, եկեղեցոյ անապ սարկահագ,



ՈՂԲ. ԳՐԵԳՈՐ ՊԱՍՏՈՐԱԿԵԱՆ

Գանձիքի Հ. Բ. Ը. Միութեան Մասնաժողովի
նախկին վարչութեան անդամ, պարբերաքեր-
թիս պատուական Խմբ ք ի թ ն ա ե և
հայկական թէրթերու աշխատակից Գրիգոր
Պասմանեան, Խոր սուզի մտանելով իր ա-

թեանս Տեղական Մասնաժողովի բազմավաստակ քարտուղարն էր միջեւ 1970ի վերջը, ուր 1957ին սկսած է հրատարակել «Տեղեկատու» պարբերաթերթը։ Սակայն ունեցած հիւանդութեան պատճառաւ ըստիպուեցաւ ձգել ու հեռանալ իր շատ սիրելի այս ազգային աշխատանքներէն և վերջին տարիներուն մնալ «Այժեմնիկ» Հանգստեան Տան մէջ։

Մեր զգածուած ցաւակցութիւնները
կը յայտնենք ողբացեալին զաւակներուն և
պարագաներուն իրենց կրած այս ծանր
կորուստին համար, մազթելով երկնային
մխիթառութիւն :

լեռոր մայրը, այրին, զառակները եհ ընտանեկան պարագաները:

Ողբացեալ Գրիգոր Պատմանեանի քաղ-
ման կարգն ու յուղարկանորութիւնը կա-
տարուեցաւ Կիբակի, 3 Յունիս 1973ին,
Դահիրէի Ս. Գրիգոր Հուսաւորիջ Եկեղեցիին
մէջ, ի Եերկայուրեան յուղարկանորունէրու:

Արարողութեանց նախազահեց Հոգի. Տ.
Ներսեն Մ. Վրդ Բապտինեան, որ նաև
խօսեցաւ, վեր առնելով ողբացեալին ար-
ժանիքները և բերած ծառայութիւնները
ազգին եւ հայ մշակոյթին:

Ողբացեալին դագաղը Եկեղեցւոյ բակին մէջ մահաբեմի մը վրայ դրուելէ Ետք, յանուն Ազգ. Խշանուրեան դամբանական մը կարդաց Պատկ. Քաղաքական ժողովի ատենապահիր Եւ Հ.Բ.Ը.Մ.ի Տեղական Մասնաժողովի յարգելի ատենապետ՝ Պր. Յակոբ Էրուելնեան, որմէ Ետք, յուղարկանորներու քափօրը ուղղուեցան Հելիոպոլսոյ Ազգ. Գերեզմանատունը, ուր Ամենայն Արքոց մատուռին մէջ վերջին կարգը կատարուելէ յետոյ սգակիրներու արցունքու աջքերուն առջև, ողբացեալին դագաղը իշեցուցին ընտանեկան դամբարանին մէջ, որ ծածկը ւեցան ծաղկեպսակներով։ Այս տիտուր առթիւ Հ.Բ.Ը.Մ.ի կողմէ Ես ուղարկուած եր ծաղկեպսակ մը։

Բոլորին կողմէ սիրուած ու յարգուած մտառորական հայ երիտասարդ մըն էր, որ յանետ բաժնուեցաւ մեզմէ: Ան քեւ Պատմա-Բանասիրական որեւէ նիմնարկ չէր յանախած, եւ սակայն հայ մեծ բանասէր ողբ. Արշակ Ալպոյտնեանին նիստողներէն եւ զայն շրջապատողներէն մին ըլլալով, սիրած էր բանասիրութիւնը եւ ազգային պատմութիւնը, ու շնորհիս իր պրատող միտրին, ինքնաշխատութեամբ դարձած էր հայ պատմա-բանասէր մը որ յանախ նորութիւններ ի յայտ կը բերէր մեր ազգային եւ եկեղեցական պատմութեան համար:

Այս կալծալի առիթով մեր զգածուած ցանակցութիւնները կը յայտնենք ողբացեալին այրիին, զանակներուն, ալեներ մօրը, սրգակիր պարագաներուն, ինչպէս նաև Գանձիրէի Ազգ. Իշխանութեան: Ա. Մ.

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՄԱՒԼԸ

ՅՈՒՇԱՐԱՐ - ՄԻՈՒԹԻՒՆ

Պատութեան Հ. Բ. Ը. Միութեան
Հիմնադիր՝ Պօղոս վահան Նուկար

HOOSHARAR - Անգլիերէն Հրատարակութիւն

Հասցե. — Armenian General Benevolent Union
109, East 40th Street
New-York N. Y. 10016.

ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐ

Հրատարակութիւն Հ. Բ. Ը. Միութեան Եւրոպայի
Երշանակային Կեդրոնական Յանձնաժողովի.
Հասցե. — 11, Square Alboni Paris 16^{me} FRANCE

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հրատարակութիւն Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան
Հասցե. — 15, Էմաս Էլ Տին փողոց — Գահիրէ
Փոստարկութիւն 717

ԽՕՍՆԱԿ

Պատութեան Հ. Բ. Ը. Միութեան Լիբանանի
Երշանակային Յանձնաժողովի
Հասցե. — Նամակատութիւն 715, Պէյրուք.

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ – ԳԱՀԻՐԵ

Դամիրեկի Հ. Բ. Ը. Միութիւնը հանոյքն ունի տեղեկացնելու պատուարժան հանրութեան բէ, իր հիմնած

ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ

գրադարանը որ կը գործէ 1958էն ի վեր, իր տրամադրութեան տակ ունի գրական, պատմական, գեղարուեստական, կրօնական եւ բանասիրական, ինչպէս նաև ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ գյորքերու նոխ հաւաքածոյ, որմէ կրնան օգտուիլ մեր ընթերցասեր անդամները եւ Գահիրեկի հայութիւնը անխտիր, առանց որեւէ վճարումի:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿԱՑՈՒՆ վճարովի չէ

Շնորհակալութեամբ կ'ընդունինք նուիրատութիւններ, մեր այս ձեռնարկը աւելի նոխ եւ շահեկան ընծայելու համար :

— Առանձու համար դիմել խմբագրութեանս,
15, Էմաս Էլ Տին փողոց Ա. յարկ — Գահիրէ

Առաջարկալու

կը նուիրեմ Ե.Դ. ()

«Տեղեկատու»ի ֆոնտին:

Առաջարկութիւն



رقم الإيداع بدار الكتب ٦١٣